ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- դեկտեմբեր 2020 թվականի №---Ա
ք.Երևան

«ՄՈԼԲԵՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի դեկտեմբերի 2-ի №448Ա որոշմամբ «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0568 լիցենզիան)՝ մինչև 2031 թվականի դեկտեմբերի 15-ը, որից կառուցման ժամանակահատված՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ը,

բ) Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի №366Ա որոշման (այսուհետ՝ Որոշման) 1-ին կետով ԼԷ№0568 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2022 թվականի հունիսի 15-ը, իսկ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությանը պարտավորեցվել է №0568 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը գործողության ժամկետով,

գ) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը, Ընկերության կողմից չէր կատարվել,

դ) Հանձնաժողովը, Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Ընկերության նկատմամբ 2020 թվականի դեկտեմբերի 1-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի №ԳԲ/34.1-Մ4-2/4822-2020 գրությամբ,

ե) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, ի կատարումն Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի գրությամբ ներկայացրել է երաշխիքը՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետից հետո 8-րդ օրը,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2020թ.